

զնոսա միայն տեսաներ ողջ եկեալ յամենայն զաւրացն իւրոց: 11 Յասուցեալ ընդ նոսա, այսպն արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց: 12 Եւ զնացեալք գային դեմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ: 13 Եւ էին հետիոտք երկոքին եղբարքն. եւ էին երկոքեան մեծք անհեղեղք, երկոքեան անձնեայք որպէս սկայազունք: 14 Մինչ դեռ գային ի ճանապարհի, ոչ կարեր Մանուէլն զնալ, զի ոտիւքն ցաւած էր, ապա Կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր, եւ տասն տասն խրասախ բերեր ըստ անձին զայնչափ այրն զանհեղեղ զանարի. եկն եբեր յերկիրս Յայոց: 15 Եւ եղել իբրեւ եկն եհաս յերկիրն Յայոց Մանուէլ եղբարքն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրեւ ետես զնա Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետն, մինչ չեւ եկեալ էր նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն, զոր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ, քանզի նա էր երեց յազգին. եւ Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտերութեան պատուին, եւ Վաչէն լինէր երկրորդ:

16 Իսկ յորժամ եհաս եկաց Մանուէլն ի փառս տերութեան իւրոյ, նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ յինքն յափշտակեաց զզաւրավարութեանն զսպարապետութիւնն, զի այն ինչ որ իւրոց նախնեացն ի բնէն կալեալ էր ի սկզբանէ, զոր արքայն Վարազդատ շնորհ առնէր իւրում դայեկին Բատայ, զայն Մանուէլ յինքն հանեալ ունէր զիշխանութիւնն: 17 Եղել յետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Յայոց Մանուէլ առ թագաւորն Վարազդատ, եւ ասէր՝ թէ Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետե միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ ենք, եւ եղեալ զանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ եւ մեռեալ ենք ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր առաջինքն անկան ի պատերազմուս ի վերայ ձեր, Վասակ հայր Մուշեղի կորեաւ ի վերայ Արշակայ արքայի, եւ մեք հանապազ վաստակեալ եւ աշխատեալ ենք ի վերայ թագաւորութեան ազգիդ ձերոյ, եւ փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն, արդ որք ի թշնամեացն մեռան, որք մնացին՝ զայն դուք Արշակունիքդ կոտորեցիք: 18 Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց զանձն իւր ի մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, եւ ոչ կարացին թշնամիքն սպանանել, դու կալալ ի բազմականի խեղդեցեր զնա: 19 Նա դու չես իսկ Արշակունի, այլ ի պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ ծանեար զվաստակաւորսն Արշակունեաց: 20 Նա մեք չենք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր եւ ի վերոյ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին ճեւաց, եւ վասն եղբարց իւրեանց գրգռութեանն, զի արիւն մեծ անկեալ է ի վերայ, վասն այնր ենք զնացեալք. եւ վասն բարոյ հանգստի գտանելոյ՝ եկեալ դադարեալ ենք: 21 Առաջին թագաւորքն Արշակունիք, որք գիտեին զմեզ ո՛վ էաք կամ ուստի՛ էաք. այլ զի դու քանզի չես Արշակունի, զնա յաշխարհեւ, եւ մի՛ մեռանիր ի ձեռաց իմոց: